

# Հայազգի կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանի գործունեությունը մինչև հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք-կաթողիկոս դառնալը

Պողոսյան Լ. Ա.

ԵՊՀ Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոն

(Հայաստան, Երևան)

[lilithpoghosyan@yahoo.com](mailto:lilithpoghosyan@yahoo.com)

**Վճռորոշ բաներ՝** կաթողիկե եկեղեցի, մանկություն, կրթություն, կարդինալ, եպիսկոպոս, գործիչ, հոգևորական, կենսագրություն, կանոնադրություն, գյուղ, համալսարան

## *Деятельность кардинала армянского происхождения Григория-Петра XV Агаджаняна до принятия рукоположения в патриарх-католикосы армянской католической церкви*

Погосян Л.А.

Кафедра истории церкви и экклесиологии ЕГУ (Армения, Ереван)

[lilithpoghosyan@yahoo.com](mailto:lilithpoghosyan@yahoo.com)

**Резюме:** Статья посвящена одному из знаменитых деятелей римской католической и армянской католической церковей Григорию-Петру XV Агаджаняну. Представлены его детство, образование, а также непростой путь к принятию священного сана. Начальное образование будущий патриарх получил в приходской школе Карапетян, где отличался особым отношением к образованию, учению и церкви. В статье рассматриваются также проблемы, которые в данный период достигли джавыхских армян, что отразилось в биографии кардинала. Позже для продолжения учебы он был отправлен в Рим, где и была предопределена вся его дальнейшая жизненная деятельность священнослужителя. Агаджанян в довольно юном возрасте становится советником Конгрегации по делам Восточных Церквей и членом Комиссии по кодификации восточного канонического права.

**Ключевые слова:** католическая церковь, детство, образование, кардинал, епископ, деятель, духовенство, биография, устав, село, университет

## *The Activities of the Armenian Cardinal Grigor-Petros XV Aghajanyan Before Becoming the Patriarch-Catholicos of the Armenian Catholic Church*

Poghosyan L.A.

YSU, Department of Armenian church history and ecclesiology

[lilithpoghosyan@yahoo.com](mailto:lilithpoghosyan@yahoo.com)

**Abstract:** This article is about Grigor-Petros XV Aghajanyan, one of the most famous figures of the Roman Catholic and Armenian Catholic churches. Here is shown the hard road of his childhood, education and ordination. He received the primary education in a parish school, where he distinguished himself with his love for education and church. The problems of the Armenians of Javakhk during that time were also taken place in this article, which left a trace in the biography of the cardinal. Then he was sent to Rome to continue his studies, where his active dedication to the church for his whole life was determined. As a young man, Grigor-Petros Aghajanyan became an advisor to the congregation of the Roman Catholic Church for Oriental Churches and a member of the jury of codification of oriental canon law.

**Keywords:** Catholic church, childhood, education, cardinal, bishop, figure, clergy, biography, charter, village, university

Հայ կաթողիկե և Հռոմեական կաթողիկե եկեղեցիների ժամանակակից պատմության նշանավոր դեմքերից է Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը (իտալերեն՝ Agagianian Gregorio Pietro): Նրա կենսագրականի ուսումնասիրությունը կլրացնի հայազգի նշանավոր գործիչների մասին տեղեկատվության տարածման անհրաժեշտությունը:

Կարինից գաղթած և հայաշատ Ախալցխայում հաստատված Հարություն Աղաջանյանի ընտանիքում 1895թ. սեպտեմբերի 18-ին ծնվեց Ղազարոս Աղաջանյանը: Հարություն Աղաջանյանը սուրբ Լուրդի նշանավոր ուխտավայր այցելությունից հետո իր հետ բերել էր Մարիամ Աստվածածնի երկու արձանիկ, որոնցից մեկը նվիրել էր Ախալցխայի ժողովրդապետությանը, մյուսը՝ Ալաստանի եկեղե-

ցուն<sup>1</sup>: Շուտով մահանում է Հարություն Աղաջանյանը, և երեք երեխա՝ Ղազարոսը իր ավագ եղբայր Պետրոսի և քույր Եղիսաբեթի հետ մնում են մոր՝ համեստ և բարեպաշտ Իսկուհի Սարուխանյանի հովանավորության ներքո: «Իմ հայրը, ով ներգրավված էր մի քանի մանր բիզնեսներում, մահացավ, երբ ես հինգ տարեկան էի, ուստի ես նրան չեմ ճանաչել», - ասել է կարդինալ Աղաջանյանը մի հարցազրույցի ժամանակ<sup>2</sup>:

Ախալցխայի կենտրոնում՝ Աղաջանյանների տանից ոչ այնքան հեռու, կառուցվաց էր կաթողիկե եկեղեցի՝ հիմնված ծայրագույն վարդապետ Եփրեմ Մեթյանի ջանքերով (իրավագետ, բանասեր-պատմաբան, բանաստեղծ, 1814թ.-ից Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ): Վերջինս, մի շարք վարդապետների և ավագների հետ միասին մի խնդրագիր էին ուղարկել գեներալ Ն.Պ. Պանկրատինին՝ ռուսական սահմաններ տեղափոխվելու վերաբերյալ<sup>3</sup>: Արևմտահայերի զանգվածային գաղթը սկսվել է 1830թ. վաղ գարնանը, որի արդյունքում հայերը համալրեցին Ախալքալաքի և Ախալցխայի բազմաթիվ գյուղերի հայ համայնքների շարքերը: Սակայն այս գաղթի պատճառով գլխովին կրճատվեց արևմտահայության թվաքանակը, Կարնո գավառի հայ կաթողիկե գյուղերի շատ քիչ թվով բնակչություն չգաղթեց՝ հույս ունենալով, որ Հռոմեական կաթողիկե եկեղեցու հովանավորությունը թույլ չի տա թուրքական իշխանություններին հաշվեհարդար տեսնել իրենց հետ<sup>4</sup>: Անմիջապես հաստատվելուց հետո հայ լուսավորչական և կաթողիկե գյուղերի նշանավորները սկսում են ձեռնարկել ծխական դպրոցների և եկեղեցիների շինարարություն: Այդ աշխատանքների արագացման համար պակաս կարևոր չէր Ջմառոն և Կ. Պոլսի հայ կաթողիկեների, այդ թվում Հռոմի կողմից ուղարկված դրամային օգնությունը: Սակայն կաթողիկե հոգևորականների պակասը հնարավոր չէր համալրել միայն ծխական դպրոցների հաշ-

վին, առավել ևս, որ դրանք ամբողջովին չէին կատարում նման գործառույթներ:

Ախալցխային և Ախալքալաքի մեկ տասնյակից ավելի հայ կաթողիկե գյուղերը հոգևոր առումով դրվեցին Ախալցխայի հայ կաթողիկե առաջնորդի իրավասության ներքո: Հռոմի ազդեցությունից խուսափելու նպատակով՝ ցարական իշխանությունները կաթողիկեների շատ իրավունքներ սահմանափակեցին, իսկ առաջնորդի պաշտոնը դարձավ նշանակով<sup>5</sup>: Բնութով քաղաքական այս որոշումն արգելք հանդիսացավ օտարազգի լատինաձեռն հոգևորականների ներկայությանը հայ կաթողիկե գյուղերում, և դա նպաստեց այն բանին, որ վերջիններս ինքնակազմակերպման միջոցով, այն է՝ սպասարկող քահանաներ պատրաստելու հարցերում, ինքնակամ նախապատվությունը տան միայն հայերին:

Ստույգ հայտնի է, որ այդ խնդրի լուծման համար Մխիթարյան միաբանությունում, Կ. Պոլսում, Վատիկանում, Ջմառոնում, հետագայում՝ Հռոմի Լևոնյան վարժարանում և այլ երկրների հոգևոր հաստատություններում հոգևորականներ պատրաստելու նպատակով հայ կաթողիկե գյուղերից ընտրվում էին ընդունակ պատանիներ: Դրա մասին է վկայում նաև 1866թ. իտալերենով պահպանված մի փաստաթուղթ, որտեղ ներկայացված են Ախալքալաքի, Ախալցխայի և Վրաստանի տարբեր շրջաններում բնակվող, հայ կաթողիկե համայնքներից առաջադրված հոգևորականների նոր պաշտոններ<sup>6</sup>:

Այսպիսի դժվարին պայմաններում էլ հաստատվեց Հարություն Աղաջանյանի ընտանիքը:

Ղազարոսը նախնական կրթություն ստացել է Կարապետյան ծխական դպրոցում, որտեղ աչքի է ընկել ուսման, կրթության և եկեղեցու նկատմամբ սիրով: 1940-ական թթ. Սովետական իշխանությունների հրամանով ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ Ախալցխայում քանդվեցին մի շարք եկեղեցիներ: Այդ եկեղեցիների շարքում էր նաև կաթողիկե եկեղեցին, ուր հաճախում էր Ղազարոսն ու իր ընտանիքի անդամները, և նրա հիմքի վրա

<sup>1</sup> Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 2:

<sup>2</sup> Healy P. F., The gentile Armenian, Catholic digest, July, 1961, p. 98

<sup>3</sup> Կարապետյան Ս., Եփրեմ Մեթը արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին, ՊԲՀ, 1997, թիվ 2, էջ 286:

<sup>4</sup> Միմավորյան Ար., Հովյան Վ., Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ, Եր., 2009, էջ 9:

<sup>5</sup> Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդում, Եր., 2003, էջ 225:

<sup>6</sup> Stui Directorium officii divini pro dioecesi Tiranspolensi in Annum Domini, 1866, Hierarchia Romano-catholica, <http://www.petergen.com/bovkalo/sp/tyraspol1866.html>:

կառուցվեց կոմունիստական կուսակցության շրջկոմի շենքը: Ինչպես պատմում են ականատեսները, եկեղեցին քանդողներից շատերը մահացել են ողբերգական մահով<sup>7</sup>:

Ինչպես վկայել է նրանց ժողովրդապետը՝ Հովսեփ Ծ. Վ. Սարուխանյանը՝ փոքրիկ Ղազարոսը շատ ուշիմ, կենսունակ և զվարթ մանուկ է եղել: Եվ երբ նրանց այցելության էր գնում Կովկասի հայ կաթոլիկական առաքելությունների հոգևոր կառավարիչ գերապատիվ Սարգիս Տեր-Աբրահամյանը, Ղազարոսը շատ անգամներ է նրան խնդրել իրեն վարդապետության ուղարկել<sup>8</sup>:

1906թ. հոկտեմբերին Սարգիս Տեր-Աբրահամյանը տարրական կրթություն ստացած 11-ամյա Ղազարոսին ուղարկում է Իտալիա՝ Հռոմ՝ ուսումը շարունակելու: Փայլուն առաջադիմությամբ ավարտելով վարժարանը՝ Ղազարոսը ուսումը շարունակում է Ուրբանոս VIII պապական համալսարանում (Pontificia Universita Urbaniana), այնտեղ ուսումնասիրելով փիլիսոփայություն և աստվածաբանություն: Իր անմնացորդ ազնվության, մտավոր հնարավորությունների և մարդկային վեհանձնության շնորհիվ վաստակում է իր դասընկերների, ուսուցիչների և վերադասի ջերմ համակրանքը:

Ուսումնառության տարիներին երկու հիշարժան դրվագներ են պատմվել Ղազարոսի և Հռոմի Քահանայապետի վերաբերյալ: Առաջին միջադեպը տեղի է ունեցել Ուրբանյան վարժարանի ուսանողներին ունկնդրության ժամանակ, երբ Պիոս Ժ պապը նրանց հարցնում է, թե ով է ամենակրտսերը նրանց մեջ: Բոլորը միաբերան պատասխանում են. «Ղազարոսը»: Ղազարոսն այդ պահին ջանում է թաքնվել իր ընկերների հետևում: Իսկ Քահանայապետը նրան կանչում է ասելով. «Ղազարե, ե՛կ արտաքս»՝ նկատի ունենալով Քրիստոսի խոսքերն ուղղված հարուցյալ Ղազարոսին<sup>9</sup>:

Մյուս միջադեպը տեղի է ունեցել 1908թ. նոյեմբերի 1-ին Լեոնյան հայ վարժարանի 25 ամյակի առիթով հայ ժառանգավորների հետ հանդիպման ժամանակ: Այս հանդիպմանը ներկա են եղել նաև հայագրի եպիսկոպոսներ, վարդապետներ և Ուրբանյան վարժարանի

հայ աշակերտները: Պիոս Ժ պապը խոսքն ուղղելով հայ աշակերտներին հումորային շեշտադրությամբ հարցնում է, թե քանիսը նրանցից պիտի եպիսկոպոսներ դառնան: Երեխա Ղազարոսն, որ ներկա էր այդ միջոցառմանն սկսում է ծիծաղել: Քահանայապետը ժպտալով անդրադառնում է նրան, թե նա ծիծաղում է, այդ դեպքում իրեն ինքն մատրոն է ոչ միայն եպիսկոպոս դառնալ, այլև պատրիարք<sup>10</sup>:

1917թ. դեկտեմբերի 23-ին 22 տարեկան հասակում Ուրբանյան վարժարանում Պետրոս Արք. Գոյունյանի ձեռքով նա ձեռնադրվում է քահանա՝ վերցնելով Ֆրանցիսկոս անունը: Արդեն սկսվել էր առաջին համաշխարհային պատերազմը, որի պատճառով էլ Աղաջանյանը մնում է Հռոմում: «Մրբութիւնն ու գիտութիւնը, ահա ճշմարիտ եկեղեցականի մը կարեւորագոյն երկսայրի զէնքը», - հետագայում սիրել է հաճախ կրկնել Լեոնյան վարժարանի սաների համար կարդինալ Աղաջանյանը, որովհետև ինքն իր ձեռնադրության ժամանակ կրում էր այդ երկսայր զենքը:

Շուտով Լաթերանյան համալսարանում սկսում է ուսումնասիրել քաղաքագիտություն և եկեղեցական իրավունք: 1919թ. ստանում է քաղաքական և եկեղեցական իրավունքի մասնագետի վկայական: Նույն թվին վերադառնում է Կովկաս մինչև 1921թ. ծառայում Թիֆլիսի Գրիգոր Լուսավորիչ կաթողիկե եկեղեցում<sup>11</sup>: Այստեղ նա հայ մանուկների համար հիմնում է Ղ. Ալիշան դպրոցը՝ հայ մանուկների միտքն ու սիրտը մշակելու համար<sup>12</sup>:

Ծառայության ընթացքում այցելում է հյուսիսային Հայաստանի կաթոլիկ հավատացյալների և տեսնելով նրանց ծանր վիճակը, ցանկություն է հայտնում հիմնել ուսումնարան: Սակայն Հայաստանի սովետական իշխանությունները թույլ չեն տալիս նրան իրագործելու իր նպատակը:

Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացմամբ՝ կաթոլիկ հայերի առջև նոր փորձություններ ծառայան, որոնք հետևանք էին խորհրդային իշխանության վարած աթեիստական քաղաքականության: Խորհրդային կարգերի հաստատման առաջին տասնամյակ-

<sup>7</sup> Մաթևոսյան Լ., Ախալցխայի հայկական դպրոցը, Երևան, 2007, էջ 160:

<sup>8</sup> Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 2:

<sup>9</sup> Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968, էջ 3:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 3:

<sup>11</sup> **Акопян В. З.**, Кардинал Григор-Петрос Агаджанян, Теодицея N 2, 2011, с. 4.

<sup>12</sup> Բազմավեպ, N3-5, 1946, (Բացարիկ թիվ), էջ 65:

ներում հակակեղեցական քաղաքականությունն ուղեկցվեց հոգևորականության նկատմամբ բռնարարքներով, աքսորով, ֆիզիկական ոչնչացումով, եկեղեցիների քանդամար, ինչպես նաև գույքի բռնագրավմամբ:

Ախալքալաքի և Ախալցխայի հայկական գյուղերից սերող հոգևորական դասի ներկայացուցիչներին, որոնք գտնվում էին Իտալիայում, Թուրքիայում, Լիբանանում, խորհրդային իշխանությունն արգելեց վերադառնալ Ջավախք<sup>13</sup> և շարունակել հոգևոր գործունեությունը: Սամցխե-Ջավախքը համարվեց «սահմանային գոտի»․ այդ ամենի պատճառով կաթոլիկ հոգևորականությունը, իբրև արտասահմանի հետ կապված անվստահելի տարր, մեծ խոչընդոտներ էր հանդիպում գյուղեր այցելություններ կատարելիս, քանի որ այնտեղ մեկնելու համար անհրաժեշտ էր հատուկ անցաթուղթ<sup>14</sup>:

1921թ. սեպտեմբերի 10-ին Լևոնյան վարժարանի տեսուչ գերապատիվ Սարգիս Տեր-Աբրահամյանի առաջարկով Աղաջանյանը վերադառնում է Հոռոմ և նշանակվում վարժարանի փոխտեսուչի պաշտոնում, որպեսզի օժանդակեր իր ուսուցչին: Նրա ուսուցիչը վարժարանի հուշամատյանում Աղաջանյանի վերաբերյալ գրել է. «Բարի եւ ուսեալ է. թող օրինէ Աստուած զինք, որ Մեծաւորաց իրեն վրա դրած գեղեցիկ յոյսերը պսակէ»<sup>15</sup>:

1932թ. հոկտեմբերի 4-ին Ֆրանցիսկոս Աղաջանյանն ընտրվում է որպես Լևոնյան վարժարանի տեսուչ: Պիոս ԺԱ պապը նրան շնորհում է «Գաղտնի Մենեկապետի» պատվաստիճանը:

Այս ամբողջ ընթացքում Աղաջանյանն իր գեղեցիկ խոսքով, քահանայական արժանի կյանքով և հոգևորականին հատուկ շնորհով հանդիսանում էր աշակերտների հիացմունքի առարկան: Այսօր էլ աշխարհի չորս կողմերում ապրող կարդինալ Աղաջանյանի ուսանողներն ու աշակերտները՝ լինելով եպիսկոպոս կամ քահանա, իրենց ուսուցչի ներհուն դաս-

տիարակությունը մինչ օրս կրում են իրենց մեջ և պարծանքով ամեն անգամ փաստում, որ իրենք աշակերտել են երջանկահիշատակ, լուսահոգի կարդինալ Աղաջանյանին<sup>16</sup>:

Վարժարանում իր աշխատանքին զուգահեռ Ֆրանցիսկոս Աղաջանյանն ուներ նաև մի շարք կարևոր այլ պարտականություններ և հանձնարարություններ: 1928թ. Աղաջանյանը դառնում է Արևելյան եկեղեցիների հարցերով կոնգրեգացիայի խորհրդական և Հռոմեական կաթոլիկ եկեղեցու արևելյան կանոնական իրավունքի կոդիֆիկացիայի հանձնաժողովի անդամ: Հակառակ իր բազմազբաղությանը, նա սիրով հանձն է առել 1921-1937թթ. Անարատ Հղության հայ քույրերի միաբանության խոստովանահայրությունն և կրոնի դասավանդումը:

Այս բոլոր պաշտոններն Աղաջանյան վարդապետը մեծ ուշադրությամբ էր կատարում: Նա լինելով պարզ մտքի և անաչառ դատողության տեր անձնավորություն կատարում էր իրեն հանձնարարված յուրաքանչյուր գործ՝ իր մասնակցությունը բերելով մի շարք կնճռոտ խնդիրների լուծմանը՝ արժանանալով իր պաշտոնակիցների և վերադասների արդար գնահատանքին:

Հայոց ազգի Մեծ եղեռնից հետո, երբ պատմական Հայաստանից մնացած փոքրիկ հողակտորի վրա, սովետական իշխանությունները գիտակցաբար փորձում էին վերացնել ազգային եկեղեցին, սփյուռքում հայ եկեղեցին և համայնքը ջանում էին իրենց շուրջ հավաքել թուրքական յաթաղանից մազապուրծ հայորդիներին: Խորհրդային Միությունում սկսված ստալինյան համատարած հետապնդումների և բռնությունների ժամանակ Վրաստանի տարածքում ևս տեղի ունեցան հայ կաթոլիկ կղերականների համատարած ձերբակալություններ, նրանց մեծ մասը շինծու, հատկապես լրտեսության մեղադրանքներով աքսորվեցին Սոլովկի կղզի, Արխանգելսկ և այլ աքսորավայրեր: Մի մասն ստիպված է եղել հրաժարվել հոգևորական լինելուց, սակայն դա չի խանգարել, որ ծայտյալ վարեն իրենց գործունեությունը: 1936-1937 թվականներին Ջավախքում սաստկացան հալածանքներն ու ճնշում-

<sup>13</sup> 1962թ. այս շրջաններ կարողացավ այցելել միայն «Բազմավեպի»-ի գլխավոր խմբագիր, Մխիթարյան հայր, ծնունդով Ալաստան գյուղից՝ Եղիա Փեչիկյանը: Ջավախք մեկնելու հարցում նրան օժանդակել է Վազգեն վեհափառը:

<sup>14</sup> **Марген А.**, Каталическая энциклопедия. Т. 1, Москва, Издательство францисканцев, 2002, с. 1491.

<sup>15</sup> Հուշամատեն, Լևոնեան հայ վարժարան, 1883-1958, էջ 122:

<sup>16</sup> Նրա սիրելի ուսանողներից են եղել Անդրանիկ Ծ. Վ. Այվազյանը, Ռաֆայել արքեպ. Մինասյանը և ուրիշներ:

ները, որին գոհ գնաց ավելի քան 2500 մարդ՝ մեծ մասամբ ուսյալ և նշանավոր մարդիկ<sup>17</sup>:

Ինչպես վկայում են հայ կաթողիկե գյուղերի բնակիչները, համագյուղացիների նկատմամբ հալածանքներն այլ ենթատեքստեր են ունեցել: Հայ կաթողիկեներին առավելապես արքայեր էն իբրև «Վատիկանի գործակալներ»: Ար. Միմավորյանը և Վ. Հովյանն իրենց աշխատության մեջ փաստում են, որ միայն «Վատիկանի գործակալ» լինելու հանգամանքը չէր արքայերու պատճառը (դա հորինված պատճառ էր), ինչպես պնդում են հայ կաթողիկեները, նրանց թվում էին կրթամշակութային և հասարակական գործունեություն ծավալող գործիչներ, նախկին դաշնակցականներ կամ հնչակյաններ<sup>18</sup>: Այս հանգամանքը մեկ անգամ ևս հաստատում է այն, որ Ջավախքի հայ կաթողիկե հավատացյալները նույնպես ունեին իրենց քաղաքական կողմնորոշումը և հայության ազգային խնդիրներով մտահոգված մարդիկ էին, այլ ոչ թե տարադավան օտար զանգված, ինչպես շատ դեպքերում, ցավոք, նրանց համարում էին:

Խորհրդային իշխանությունները եկեղեցու և ժողովրդի միջև եղած հոգևոր կապերն արմատախիլ անելու նպատակով որոշում ընդունեցին փակել դեռևս գործող եկեղեցիներն ու մատուռները: Բացառությամբ Տուրքիսի<sup>19</sup> գյուղի եկեղեցու՝ մնացած բոլոր եկեղեցիները վերածվեցին ցորենի ամբարների, իսկ դրանց պատկանող գույքի մեծ մասն առգրավվեց:

Եվ այսպիսի պայմաններում Հռոմեական կաթողիկե եկեղեցին գնահատեց տաղանդավոր և էներգիայով լեցուն հայ հոգևորականի գործունեությունը: 1935թ. հուլիսի 21-ին Ֆրանցիսկոս Ադաջանյանին Տեր-Աբրահամյանը օծում է եպիսկոպոսի աստիճանում Լևոնյան վարժարանի սբ. Նիկողայոս եկեղեցում: Ապա Պիոս ԺԱ Պապի կողմից նշանակվում է Լիբանանի Ջմմառի պատրիարքական միաբանության հոգևոր վերակացու: Նույն թվականի

օգոստոսի 8-ին հասնում է Բեյրութ Ջմմառի վանք և օգոստոսի 20-ին նախագահում 1934թ. կանոնադրությամբ սահմանված Ջմմառի վանքի վարչության առաջին ընտրությունը: Հոկտեմբերի սկզբին վերադառնում է Հռոմ շարունակելով իր ծառայությունը և ուսուցչությունն Ուրբանյան վարժարանում:

Այսպիսի պայմաններում շուտով նրան էր վիճակված դառնալու հայ կաթողիկե եկեղեցու պատրիարք-կաթողիկոս, ով պիտի արժանապատվորեն ստանձներ իրեն վստահված եկեղեցու և իր հոտի հովվապետությունը (1937-1962թթ.):

### Գրականություն

1. Բագմավեյ, N3-5, 1946:
2. Հուշամատեն, Լեւոնեան հայ վարժարան, 1883-1958:
3. Հռոմկլա, Թիվ 13, Հռոմ, 1967-1968:
4. Զուռնաջյան Ս., Ջավախք, Ժամանակագրություն, Եր., 2002:
5. Միմավորյան Ար., Հովյան Վ., Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ, Եր., 2009:
6. Կարապետյան Ս., Ջավախք, Երևան, 2006, էջ 505:
7. Կարապետյան Ս., Եփրեմ Մեթր արևմտահայության 1829-1830թթ. գաղթի մասին, ՊԲՀ, 1997, թիվ 2:
8. Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդում, Եր., 2003:
9. Մաթևոսյան Լ., Ախալցխայի հայկական դպրոցը, Երևան, 2007:
10. Акопян В. З., Кардинал Григор-Петрос Агаджанян, Теодицея N 2, 2011.
11. **Марген А.**, Каталическая энциклопедия. Т. 1, Москва, Издательство францисканцев, 2002.
12. Directorium officii divini pro dioecesi Tiranspolensi in Annum Domini, 1866, Hierarchia Romano-catholica, <http://www.petergen.com/bovkalo/sp/tyraspol1866.html>
13. Healy P. F., The gentile Armenian, Catholic digest, July, 1961.

<sup>17</sup> Զուռնաջյան Ս., Ջավախք, Ժամանակագրություն, Եր., 2002, էջ 117:

<sup>18</sup> Միմավորյան Ար., Հովյան Վ., Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ, Եր., 2009, էջ 20:

<sup>19</sup> Ստալինյան բռնապետության տարիներին իշխանությունները ցանկացել են գյուղի եկեղեցին, ինչպես հարևան շատ այլ բնակավայրերում, վերածել պահեստի, սակայն տուրքիեցիներն ընդդիմացել են, և եկեղեցին շարունակել է գործել: Կարապետյան Ս., Ջավախք, Երևան, 2006, էջ 505: